



ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

*ՀՊՏՀ մակրոտէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու*

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՀՊՏՀ մակրոտէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու*

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*ՀՊՏՀ մակրոտէկոնոմիկայի ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու*

ՀՀ ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ¹

Արտահանման կառուցվածքը և դինամիկան ժամանակակից աշխարհում մեծ կարևորություն ունեն երկրների մրցունակության բարձրացման, տնտեսական աճի և զարգացման տեսանկյունից: Հետևաբար՝ արտահանման ծավալների, դինամիկայի և կառուցվածքի վրա ազդող գործոնների վերլուծությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն, քանի որ կարող է հիմք հանդիսանալ արտահանման աճին ուղղված տնտեսական քաղաքականության արդյունավետության մակարդակի բարձրացման համար, ինչն էլ, իր հերթին, կնպաստի տնտեսության մրցունակության բարձրացմանը: Սույն հոդվածում իրականացվել է արտահանման դինամի-

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի՝ «ՀՀ արդյունաբերության մրցունակության բարձրացման հնարավորությունները» դրամաշնորհային թեմայով հետազոտության շրջանակներում:

կայի և կառուցվածքի վերլուծություն, գնահատվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին խոշոր ապրանքատեսակների արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների, մասնավորապես՝ առաջարկի, պահանջարկի և փոխարժեքի ազդեցությունները: Հետազոտությունն իրականացվել է գծային բազմաչափ ռեգրեսիոն և կառուցվածքային ավտոռեգրեսիոն մոդելների կիրառմամբ: Նման մոտեցումը հնարավորություն է տվել գնահատելու արտահանման ծավալների վրա ինչպես մակրոտնտեսական գործոնների ազդեցության չափը և նշանակալիությունը, այնպես էլ դրանց ազդեցության տևողությունը և հետագիծը: Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ արտահանման ծավալների դինամիկայի վրա մակրոտնտեսական գործոնները՝ ՀՀ արդյունաբերության իրական աճը, գործընկեր երկրներում տնտեսական աճը և իրական փոխարժեքի փոփոխությունը, ունեն նշանակալի ազդեցություն, սակայն դրանց չափը, հետագիծը և տևողությունը տարբերվում են՝ կախված ապրանքատեսակից և արտահանման շուկաներից:

Հիմնաբառեր. արտահանում, արտահանման գործոններ, մրցունակություն, փոխարժեք, արտաքին պահանջարկ

JEL: F47, O11
DOI: 10.52174/1829-0280_2021_4_9

Ներածություն: Արդյունաբերության մրցունակության բարձրացման հնարավորությունների ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է արդյունաբերական արտադրանքի արտահանման միտումների և դրանց վրա ազդող գործոնների քննությունը: ՀՀ արտահանման ապրանքային, աշխարհագրական կառուցվածքներով պայմանավորված հիմնախնդիրները մշտապես եղել են հայ տնտեսագետների ուշադրության կենտրոնում, հատկապես, որ ՀՀ տնտեսական աճը մեծապես պայմանավորված է ամբողջական պահանջարկի բաղկացուցիչների տատանումներով: Սակայն հարցը նոր սրություն է ստացել, երբ 2020 թ., բացասական իրադարձություններով պայմանավորված, ՀՀ արտահանման ծավալները զգալիորեն կրճատվել են, ինչն արտահայտվել է գրեթե բոլոր ապրանքախմբերի արտահանման ծավալների կրճատմամբ: Ճիշտ է, արտահանման կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները կարող են ժամանակավոր լինել և չեզոքանալ ՀՀ և գործընկեր երկրների տնտեսությունների վերականգնման դեպքում, սակայն արդյունաբերական արտադրանքի արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության չափի գնահատումը, ավելացման հնարավորությունների բացահայտումը կարող են էապես նպաստել երկրի տնտեսության խոցելիության աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանը՝ պայմանավորված արտաքին շուկաներում կտրուկ գնային տատանումներով, ինչպես նաև միջազգային շուկաների կառուցվածքային և ծավալային փոփոխություններով:

Սույն հոդվածի նպատակն է գնահատել մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների և դինամիկայի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների չափը և տևողությունը, ինչը կարող է արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանն ուղղված քաղաքականության միջոցառումների մշակման հիմք հանդիսանալ:

Իրականացվել է ՀՀ արտահանման պատմական միտումների վերլուծություն՝ կենտրոնանալով մշակող արդյունաբերության արտադրանքի արտա-

հանման ծավալների, աճի և դրանց վրա ազդող գործոնների ուսումնասիրության վրա: Վերլուծությունն իրականացվել է 2000-2020 թթ. համար՝ նպատակ ունենալով բացահայտել ինչպես արտահանման պատմական կառուցվածքը և երկարաժամկետ միտումները, այնպես էլ վերջին տարիների զարգացումները և նշանակալի փոփոխությունները:

Գրականության ակնարկ: Արտահանման զարգացումները և դրա վրա ազդող գործոնները մշտապես եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հատկապես կարևորվում է մշակող արդյունաբերության աճի ուսումնասիրությունը, քանի որ դա առանցքային նշանակություն ունի ազգային տեխնոլոգիական կարողությունների ձևավորման, ընդհանուր արդյունաբերական ներուժի, արտադրողականության և կապիտալի կուտակման տեսանկյունից:

Արտահանման ծավալների վրա ազդող գործոնների շարքում հիմնականում ներառվում են ինչպես ներքին տնտեսական, այնպես էլ արտաքին պահանջարկը բնութագրող գործոնները, քանի որ վերլուծությունները փաստում են՝ եթե երկրները նույնիսկ բարենպաստ պայմաններով հասանելիություն են ստանում արտասահմանյան շուկաներ իրենց ապրանքներն արտահանելու համար, դա դեռևս բավարար չէ, քանի որ ներքին արտադրանք թողարկող կազմակերպությունների մրցունակությունը հաճախ չի բավարարում նոր շուկաներում ապրանքներն իրացնելու համար²:

Մ. Ֆուգազան³ քանակական մեթոդների կիրառմամբ գնահատել է արտահանման ծավալների վրա ներքին և արտաքին գործոնների ազդեցությունները՝ եզրակացնելով, որ առաջարկի գործոնները, մասնավորապես՝ երկրների ներքին արտադրական հզորությունների անբավարար մակարդակը, հաճախ արտահանման ամենազլխավոր խոչընդոտներից են հատկապես Աֆրիկայի և Միջին Ասիայի երկրներում: Ս. Ռեդինգը և Ա. Վենաբլեսը⁴ նույնպես, էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ, ուսումնասիրել են արտահանման վրա ներքին առաջարկի և արտաքին պահանջարկի գործոնների ազդեցությունները և հանգել այն եզրակացության, որ ներքին ինստիտուցիոնալ և աշխարհագրական, ինչպես նաև արտաքին աշխարհագրական գործոնները գրեթե նույն նշանակությունն ունեն արտահանման ծավալների դինամիկայի համար:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա ազդող գործոնների գնահատմանն ուղղված աշխատանքների շարքին է դասվում Ե. Սումիյաթի⁵ կողմից իրականացված հետազոտությունը, որի շրջանակում գնահատվել են մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների վրա ՀՆԱ, փոխարժեքի և օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ազդեցությունները Ինդոնեզիայի օրինակով: Վերջինիս արդյունքնե-

² Տե՛ս **Supper E.**, Is there effectively a level playing field for developing country exports?, Policy Issues in International Trade and Commodities, Study Series, No. 1, 2001, UNCTAD/ITCD/TAB/2

³ Տե՛ս **Fugazza M.**, export performance and its determinants: Uupply and demand constraints, Policy Issues in International Trade and Commodities, Study Series, No. 26, 2004, UNCTAD/ITCD/TAB/27

⁴ Տե՛ս **Redding S., Venables A.**, Geography and export performance: External market access and internal supply capacity, NBER Working Paper 9637, 2003:

⁵ Տե՛ս **Sumiyati E.E.**, Factors affecting manufacturing exports, Journal of Economics, Business, and Accountancy Ventura, Vol. 23, No. 2, August – November 2020, էջ 254 – 266:

րը ցույց են տվել, որ ՀՆԱ աճը նշանակալի ազդեցություն է ունենում արտահանման ծավալների վրա, սակայն փոխարժեքի և ՕՈՒՆ ազդեցությունը նշանակալի չէ: Նմանատիպ հետազոտություն⁶ ավելի վաղ կատարվել էր Քենիայի տնտեսության օրինակով, որտեղ ուսումնասիրվել է մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա ՕՈՒՆ, իրական արդյունավետ փոխարժեքի, առևտրի բացության, առևտրի պայմանների և ՀՆԱ ազդեցությունները: Արդյունքները ցույց են տվել, որ նշված բոլոր գործոններն արտահանման վրա ունեն նշանակալի ազդեցություն:

Ռ. Անանդի և մյուսների⁷ կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ արտահանման առաձգականությունը մի շարք գործոններով կախված է փոխարժեքից, ինչպիսիք են, օրինակ՝ ապրանքների շուկայական մրցունակությունը և աշխատանքի շուկայի սահմանափակումները, որոնք փոխարժեքի արժեզրկման դեպքում կարող են խոչընդոտել արտահանման ընդլայնմանը: Մյուս կողմից՝ կազմակերպությունների կարողությունը ապրանքների բազմազանեցման հարցում փոխարժեքի նկատմամբ արտահանման ծավալների առաձգականությունը մեծացնող գործոն է:

Հայ հետազոտողների ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են ՀՀ տնտեսության մրցունակությունն ապահովող հիմնական արդյունաբերական ապրանքախմբերի արտահանման վրա իրական փոխարժեքի ազդեցության գնահատմանը:

Վճարային հաշվեկշռի ցուցանիշների և իրական արդյունավետ փոխարժեքի կապերի ուսումնասիրությանը և գնահատմանը նվիրված հետազոտությունում⁸ վերլուծվել են վճարային հաշվեկշռի ցուցանիշները, դրանց դինամիկան, բացահայտվել են ՀՀ վճարային հաշվեկշռի բնորոշ գծերը, դիտարկվել են իրական արդյունավետ փոխարժեքի և ընթացիկ կապիտալի ու ֆինանսական հաշիվների միջև առկա կապերը: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է, թե նշված հաշիվների մնացորդների տատանումների որ մասն է բացատրվում իրական արդյունավետ փոխարժեքի տատանումներով: Հետազոտության արդյունքները հանգել են հետևյալին. 1997–2011 թթ. իրական արդյունավետ փոխարժեքի 1 տոկոսով արժևորման դեպքում մեկ եռամսյակ անց ընթացիկ հաշվի պակասորդը խորանում է 7.4 տոկոսով, առևտրային հաշվեկշռինը՝ 4.6 տոկոսով, կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդը 3 եռամսյակ հետո աճում է 8.7 տոկոսով, ֆինանսական հաշվինը՝ 14.8 տոկոսով: Իրական արդյունավետ փոխարժեքի տատանումները բացատրում են ընթացիկ հաշվի տատանումների 61.4%-ը, առևտրային հաշվեկշռի տատանումների 60.3%-ը, կապիտալի և ֆինանսական հաշվի տատանումների 61.4%-ը և ֆինանսական հաշվի տատանումների 54.1%-ը: Հետազոտության արդյունքում եզրակացվել է, որ իրական արդյունավետ

⁶ Տե՛ս **Matiy A.K., Matundura E.**, Analysis of macroeconomic factors affecting the performance of manufactured exports in Kenya, The International Journal of Business & Management, Vol. 7, Issue 9, 2019, էջ 133-156:

⁷ Տե՛ս **Anand R., Perrelli R., Zhang B.**, South Africa's exports performance: Any role for structural factors?, IMF Working Paper, WP/16/24, 2016:

⁸ Տե՛ս **Վարդանյան Բ. Զ., Ավագյան Գ. Ա.**, ՀՀ վճարային հաշվեկշռի վերլուծությունը և դրա վրա իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցության գնահատումը, Եր., «Տնտեսագետ» հրատ., «Բանբեր ՀՊՏՀ», N 4 (28), 2012, էջ 28-40:

փոխարժեքը զգալի ազդեցություն ունի վճարային հաշվեկշռի առանձին հաշիվների՝ հատկապես զուտ արտահանման վրա:

«Ն տնտեսության համար արտահանման մեծ բաժին և որակական մաս ապահովող ապրանքախմբերի (հանքահումքային արտադրանք, պատրաստի սննդի արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր) արտահանման վրա իրական փոխարժեքի՝ որպես գնային գործոնի ազդեցությունների գնահատմանը նվիրված հետազոտության արդյունքները⁹ (հետազոտությունն իրականացվել է առանձին բազմաչափ ռեգրեսիոն հավասարումների կառուցման և գնահատման միջոցով՝ կիրառելով համապատասխան ցուցանիշների 1997–2014 թթ. եռամսյակային տվյալները) ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում իրական արդյունավետ փոխարժեքի 1%-ային կետով արժևորումը մեկ եռամսյակ անց հանգեցնում է հանքահումքային արտադրանքի արտահանման 2.55%-ային կետով նվազման, պատրաստի սննդի արտադրանքի արտահանման 1.18%-ային կետով նվազման, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ու մետաղների արտադրանքի արտահանման 1.85%-ային կետով նվազման, երեք եռամսյակ անց՝ ոչ թանկարժեք մետաղների արտահանման 0.34%-ային կետով նվազման: Կատարված հետազոտությունը հեղինակի համար հիմք է՝ եզրակացնելու, որ իրական փոխարժեքը համաշխարհային շուկայում «Ն տնտեսության մրցունակության վրա անմիջական և նշանակալի ազդեցություն ունեցող հիմնարար փոփոխական է: Փաստորեն, փորձառական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ հստակ կապ գոյություն ունի իրական փոխարժեքի և արտադրողականության միտումների միջև, ինչը փաստում է իրական փոխարժեքի՝ որպես մրցունակության ապահովման գործոնի կարևորությունը:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ արտահանման շարժընթացի վրա տարբեր գործոնների ազդեցությունները եղել են բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Միևնույն ժամանակ, ըստ ապրանքատեսակների, հատկապես մշակող արդյունաբերության ապրանքերի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատմանը նվիրված հետազոտությունները սակավաթիվ են: «Ն տնտեսության համար առկա են իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությունների գնահատականներ, սակայն ներքին տնտեսական առաջարկի և արտաքին պահանջարկի գործոնների ազդեցության գնահատականներ առկա չեն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում իրականացնելու առանձին հետազոտություն «Ն-ում մշակող արդյունաբերության արտադրանքի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման ուղղությամբ, որի արդյունքները կարող են օգտագործվել «Ն-ում արտահանման ընդլայնմանը և տնտեսության մրցունակության աճին ուղղված տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով:

⁹ Տե՛ս Մխիթարյան Լ. Կ., Իրական փոխարժեքը և «Ն արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները, Եր., «Տնտեսագետ» հրատ., «Բանբեր ՀՊՏՀ», 3(39), 2015, էջ 60-73:

Հետազոտության մեթոդաբանություն: Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման վրա ազդող մակրոտնտեսական գործոնները գնահատելու նպատակով կառուցվել են տնտեսաչափական մոդելներ՝ երկու տարբեր մոտեցմամբ: Առաջին մոտեցմամբ արտահանման ծավալների վրա ազդող գործոնների ազդեցությունը գնահատվել է բազմաչափ գծային ռեգրեսիայի մոդելների միջոցով, որը թույլ է տվել գնահատել մակրոտնտեսական գործոնների ազդեցության չափը և նշանակալիությունը: Երկրորդ մոտեցման դեպքում կառուցվել և գնահատվել են կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիոն մոդելներ, որոնց օգնությամբ հնարավոր է եղել ուսումնասիրել արդյունաբերական արտադրանքի արտահանման և դրա վրա ազդող գործոնների կապը՝ վերջիններիս միջև փոխազդեցությունները և միաժամանակյա ներգործությունները հաշվի առնելով, ինչը հնարավորություն է տվել գնահատելու մակրոտնտեսական գործոնների ազդեցության տևողությունը:

Որպես արտահանման ծավալների վրա ազդող մակրոտնտեսական գործոններ՝ գծային ռեգրեսիայի մոդելներում կիրառվել են ՀՀ արդյունաբերության ծավալների իրական աճը՝ որպես առաջարկի գործոն, գործընկեր երկրների տնտեսական աճը՝ որպես պահանջարկի գործոն և իրական փոխարժեքը: Ընդ որում, արտաքին պահանջարկը և փոխարժեքը տարբերվում են առանձին մոդելներում՝ ելնելով կախյալ փոփոխականի արտահանման աշխարհագրական ուղղություններից: Հիմնական արդյունքները պարունակող ռեգրեսիայի մոդելները ներկայացված են ստորև:

Ընդհանուր արտահանման վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{total} = \beta_1 Exp_{t-1}^{total} + \beta_2 Ind_t^{total} + \beta_3 REER_{t-1} + \beta_4 Y_{t-1}^f + \varepsilon_t \quad (1)$$

Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{manuf} = \beta_1 Ind_t^{manuf} + \beta_2 REER_t^{rub} + \beta_3 Y_t^f + \varepsilon_t \quad (2)$$

¹⁰ Կախյալ փոփոխականը՝ Exp_t^{total} -ը, ընդհանուր արտահանման ծավալն է, Ind_t^{total} -ը՝ ընդհանուր արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը, $REER_{t-1}$ -ը՝ իրական արդյունավետ փոխարժեքը, Y_{t-1}^f -ը՝ արտաքին արդյունավետ պահանջարկը: Վերջինս ներկայացնում է ՀՀ հիմնական տնտեսական գործընկեր երկրների՝ Ռուսաստանի, Եվրոպական միության, Շվեյցարիայի, Չինաստանի և ԱՄՆ-ի տնտեսական աճերի միջին կշռված արժեքը: Արտաքին պահանջարկի հաշվարկման համար որպես հիմք են ընդունվել ՀՀ-ից արտահանման ծավալների կշիռները:

¹¹ Կախյալ փոփոխականը՝ Exp_t^{manuf} -ը, մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալի եռամսյակային աճն է, Ind_t^{manuf} -ը՝ մշակող արդյունաբերության ավելացված արժեքի իրական եռամսյակային աճը, $REER_t^{rub}$ -ը՝ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի իրական փոխարժեքը: Նկատենք, որ մոդելում կիրառվել է ոչ թե իրական արդյունավետ փոխարժեքը, այլ ՌԴ ռուբլու նկատմամբ իրական փոխարժեքը, քանի որ մշակող արդյունաբերության արտադրանքի զգալի մասն արտահանվում է ՌԴ: Հարկ է նշել, որ իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությունը մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների վրա գնահատվել է տարբեր մոդելներով, սակայն նշանակալի կապ չի գտնվել:

Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{food} = \beta_1 Exp_{t-1}^{food} + \beta_2 Exp_{t-2}^{food} + \beta_3 Ind_t^{manuf} + \beta_4 RER_t^{rub} + \beta_5 Y_t^{rus} + \varepsilon_t \quad (3)$$

Մանածագործական արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Exp_t^{text} = \beta_1 Exp_{t-1}^{text} + \beta_2 Ind_t^{manuf} + \beta_3 RER_t^{rub} + \beta_4 Y_t^{rus} + \beta_5 Y_{t-1}^{rus} + \beta_6 Y_{t-2}^{rus} + \varepsilon_t \quad (4)$$

Կառուցվածքային վեկտորային ավտոռեգրեսիոն (SVAR) մոդելները կառուցվել են ռեգրեսիոն մոդելներում կիրառված ժամանակային շարքերի օգտագործմամբ: Սակայն եթե ռեգրեսիոն մոդելներում փոփոխականները ներկայացված էին որպես լոգարիթմական եռամսյակային տարբերություններ (եռամսյակը՝ նախորդ եռամսյակի նկատմամբ), ապա SVAR մոդելների դեպքում հաշվարկվել են լոգարիթմական տարբերությունները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ, հետևաբար՝ ազդեցության գործակիցների չափերը կարող են տարբերվել: Կառուցվածքային մոդելների միջոցով գնահատականների իրականացումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները արտահանման ծավալների վրա՝ դրանց միջև էկզոգեն և էնդոգեն փոխառնչությունները հաշվի առնելով:

SVAR մոդելի կառուցման համար նախ գնահատվել է կրճատ տեսքով VAR մոդելը, որն ունի հետևյալ տեսքը.

$$Y_t = \beta_0 + \beta_1 Y + u_t \quad (5)$$

Էկզոգեն փոփոխականների շղկերին արտահանման ծավալների արձագանքը գնահատելու նպատակով անհրաժեշտ է կրճատ տեսքով VAR մոդելում ներառել A մատրիցը հետևյալ ձևով.

$$A * Y_t = \beta_0 + \beta_1 Y_{t-1} + u_t \quad (6)$$

Այնուհետև, SVAR մոդելի կառուցման համար, A մատրիցում հարկ է ներմուծել սահմանափակումներ, ինչը կատարվել է Չոլեսկիի մեթոդով: Այդ դեպքում անհրաժեշտություն է առաջանում որոշելու դիտարկվող փոփոխականների հերթականությունը: Այսինքն՝ Y վեկտորում փոփոխականները պետք է դասավորվեն ամենաէկզոգենից ամենաէնդոգեն սկզբունքով, որը ներկայացված է աղյուսակ 1-ում:

¹² Կախյալ փոփոխականը՝ Exp_t^{food} -ը, պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալի եռամսյակային աճն է, իսկ Y_t^{rus} -ը՝ ՌԴ տնտեսական եռամսյակային աճը: Այս մոդելի դեպքում, նախորդների համեմատությամբ, փոխվել է արտաքին պահանջարկի փոփոխականը, որը պայմանավորված է պատրաստի սննդի արտադրանքի արտահանման աշխարհագրական կառուցվածքով:

¹³ Կախյալ փոփոխականը՝ Exp_t^{text} -ը, մանածագործական արտադրանքի արտահանման ծավալի եռամսյակային աճն է: Վերջինիս վրա արտաքին պահանջարկը, մասնավորապես՝ ՌԴ տնտեսական աճը, ունի երկարաժամկետ ազդեցություն՝ մնալով նշանակալի մոտ երեք եռամսյակ:

¹⁴ Y-ը փոփոխականների վեկտորն է, β_0 -ն՝ հաստատունների վեկտորը, β_1 -ը՝ գործակիցների մատրիցը, իսկ u_t -ն՝ մոդելի սխալների վեկտորը:


Աղյուսակ 1

SVAR մոդելներում կիրառված փոփոխականները և դրանց հերթականությունը

Ընդհանուր արտահանման մոդել	Մշակող արդյունաբերության արտահանման մոդել	Պարտաստի սննդի արտադրանքի արտահանման մոդել	Մանածագործական արտադրանքի արտահանման մոդել
$Y = \begin{bmatrix} Y^f \\ Ind^{total} \\ REER \\ Exp^{total} \end{bmatrix}$	$Y = \begin{bmatrix} Y^f \\ Ind^{manuf} \\ REER^{sub} \\ Exp^{manuf} \end{bmatrix}$	$Y = \begin{bmatrix} Y^{sub} \\ Ind^{manuf} \\ REER^{sub} \\ Exp^{food} \end{bmatrix}$	$Y = \begin{bmatrix} Y^{sub} \\ Ind^{manuf} \\ REER^{sub} \\ Exp^{tex} \end{bmatrix}$

Վերլուծություն: ՀՀ արտահանման ծավալների աճի տեմպը 2000–2020 թթ. միջինում կազմել է տարեկան 19.2%՝ առանց ճգնաժամային տարիները¹⁵ հաշվի առնելու: Արդյունքում՝ աճել է նաև ապրանքների արտահանման կշիռը ՀՆԱ-ում՝ 2020 թ. հասնելով 20.1%-ի: ՀՀ արտահանման կառուցվածքը, ինչպես զարգացող այլ երկրներում, աչքի է ընկնում ապրանքային կենտրոնացվածությամբ, ինչը բնորոշ է եղել ՀՀ զարգացման գրեթե բոլոր ժամանակահատվածներին:

Արտահանման կառուցվածքում պատմականորեն զգալի կշիռ են ունեցել 4 ապրանքախմբեր՝ «հանքահումքային արտադրանք», «պատրաստի սննդի արտադրանք», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», որոնց գումարային կշիռն ընդհանուր արտահանման կառուցվածքում 2000–2020 թթ. միջինում կազմել է շուրջ 80%:




Գծապատկեր 1. Արտահանումն ըստ 20 ապրանքախմբերի (հազ. ԱՄՆ դոլար)


¹⁵ Ճգնաժամային տարիներ են համարվել 2008–2009, 2014–2015 և 2020 թվականները:

2018–2020 թթ. վերոնշյալ ապրանքախմբերի ընդհանուր կշիռը փոքրինչ նվազել է՝ կազմելով 77%, ինչը պայմանավորված է եղել հիմնականում «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի կշիռների նվազմամբ:

Արտահանման կառուցվածքում մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանումն առանձնացնելու համար ընդհանուր արտահանման ծավալներից նվազեցվել են գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտների արտադրանքի արտահանման ծավալները¹⁶: Այդ պարագայում, մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կշիռն ընդհանուր արտահանման կառուցվածքում 2000-2020 թթ. միջինում կազմել է 31.2%: Հետզհետեմային ժամանակահատվածում (2010–2018 թթ.) մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կշիռն ունեցել է աճի միտում՝ 2018 թ. հասնելով 41.2%-ի, 2019 և 2020 թթ. նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 39.3% և 35.1%:



Գծապատկեր 2. Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կշիռը (%)



Գծապատկեր 3. Արդյունաբերության ոլորտի 4 հիմնական ապրանքախմբերի արտահանման ծավալները (մլն ԱՄՆ դոլար)

Մշակող արդյունաբերության ոլորտի ապրանքների արտահանման կառուցվածքում գերակշռում են չորս ապրանքախմբերը՝ «պատրաստի սննդի արտադրանք», «մանածագործական իրեր», «սարքեր և ապարատներ» «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», որոնց գումարային կշիռը ոլորտի արտահանման կառուցվածքում կազմում է շուրջ 90%, իսկ ընդհանուր արտահանման կառուցվածքում՝ ավելի քան 30%: Նշված ապրանքախմբերի արտահանման ծավալներն ունեցել են պատմական զգալիորեն

¹⁶ Մասնավորապես՝ հանվել են արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի 1-3, 5, 14-15, 17 և 21 բաժիններին դասվող ապրանքների արտահանման ծավալները:

բարձր աճի տեմպ, որը, սակայն, դանդաղել է 2018–2019 թվականներին (աղյուսակ 2):

2018–2019 թթ. աճի տեմպի արագացում է գրանցվել միայն «սարքեր և ապարատներ» ապրանքախմբի արտահանման գծով, ինչի հաշվին այդ ապրանքախմբի կշիռը զգալիորեն աճել է՝ 2019 թ. հասնելով 9.2%-ի՝ նախորդ տարվա 5.3%-ի դիմաց:

Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանման մյուս ապրանքախմբերի շարքում վերջին տարիներին աճի տեմպի արագացում է գրանցվել միայն «պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ», «թուղթ և թղթից իրեր» և «իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերի արտահանման ծավալի գծով, սակայն դրանց գումարային կշիռը փոքր է և ունի նվազման միտում՝ 2018–2019 թթ. կազմելով միջինում 3.4%:

Աղյուսակ 2

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման աճի տեմպը

Աճը (%)	2016	2017	2018	2019	2020	2010-2019	2018-2019
Պատրաստի սննդի արտադրանք	28.1	25.8	5.5	16.1	-12.8	21.3	10.8
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	15.9	69.9	-2.8	7.2	-3.8	18.9	2.2
Պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	-1.6	10.8	38.8	-4.5	16.3	6.6	17.2
Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	59.0	27.6	32.7	-36.8	-40.4	21.0	-2.1
Փայտ և փայտյա իրեր	20.5	51.7	-17.9	-41.8	-46.3	18.9	-29.9
Թուղթ և թղթից իրեր	-1.1	-17.3	14.0	2.6	-9.5	6.8	8.3
Մանածագործական իրեր	41.6	40.6	65.5	-24.8	-21.6	39.0	20.4
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	57.8	15.9	58.2	-42.0	15.2	17.3	8.1
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	27.0	5.0	51.1	-34.0	25.6	6.1	8.6
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	35.5	97.0	5.4	2.3	-2.5	14.7	3.8
Սարքեր և ապարատներ	25.9	20.2	34.1	82.0	-36.3	32.0	58.0
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	77.0	183.3	-40.1	-55.4	41.7	51.0	-47.8
ԸՆԴԱՄԵՆԸ	30.7	34.1	16.0	5.1	-15.3	19.5	10.5

«Պատրաստի սննդի արտադրանքի» արտահանման միտումները մեծ մասամբ պայմանավորված են «ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ» և «ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ» ապրանքատեսակների արտահանմամբ, որոնց ընդհանուր կշիռը գերազանցում է «պատրաստի սննդի արտադրանքի» ընդհանուր ծավալի 88%-ը:

«Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանման կազմում հիմնականում ներառված է հագուստի և հագուստի պարագաների, ինչպես նաև տրիկոտաժե հագուստի արտահանումը, որոնց կշիռը մանածագործական իրերի արտահանման ծավալում կազմում է շուրջ 95%: Ընդ որում, ընդհանուր մանածագործական իրերի արտահանման աճի տեմպը 2017 և 2018 թթ. եղել է բավականին բարձր՝ կազմելով համապատասխանաբար 40.6% և 65.5%, սակայն 2019 թ. գրանցվել է արտահանման ծավալի անկում՝ 24.8%-ով:

2020 թ. արտահանման ծավալը շարունակել է նվազել՝ կապված համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամով:

Աղյուսակ 3

«Պարտաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի կառուցվածքը և միությունները

	2017			2018			2019			2020		
	Կշիռը	Աճը	Նպաստումը	Կշիռը	Աճը	Նպաստումը	Կշիռը	Աճը	Նպաստումը	Կշիռը	Աճը	Նպաստումը
Պարտաստի սննդամթերք մսից և ծովամթերք	0.8	32.4	0.2	1.2	65.8	0.5	1.2	18.5	0.2	1.5	7.5	0.1
Շաքար և շաքարից պատրաստված իրուշակներն	0.3	13.3	0.0	0.2	-17.8	0.0	0.1	-22.2	0.0	0.1	-12.8	0.0
Կակաո և դրանից պատրաստված մթերք	2.0	222.2	1.8	2.9	52.0	1.1	2.9	14.1	0.4	2.4	-27.4	-3.8
Պարտաստի բուսական արտադրանքից	0.2	-21.7	-0.1	0.2	14.5	0.0	0.2	-11.7	0.0	0.3	41.9	0.1
Բանջարեղենի, մրգերի, կամ բոյանրի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք	4.6	26.8	1.2	4.9	11.6	0.5	4.1	-2.0	-0.1	6.0	28.0	3.2
Սննդամթերքի տարբեր տեսակներ	0.6	32.4	0.2	0.6	5.9	0.0	0.6	14.6	0.1	1.1	65.3	0.4
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ	46.1	37.5	15.8	41.5	-5.0	-2.3	45.6	27.6	11.5	42.8	-18.2	-6.3
Սննդային արդյունաբերության մնացորդներ և թափոններ, պարտաստի կերեր՝ կենդանիների համար	0.0	-95.8	-0.1	0.0	80.1	0.0	0.0	8.3	0.0	0.2	2,197.2	0.2
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	45.4	13.5	6.8	48.4	12.5	5.7	45.2	8.5	4.1	45.5	-12.3	-5.6
ԸՆԴԱՄԵՆԸ	100.0	25.8	25.8	100.0	5.5	5.5	100.0	16.1	16.1	100.0	-12.8	-12.8




«Սարքեր և ապարատներ» ապրանքախմբի արտահանման կառուցվածքում ներառված են օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, բժշկական, ճշգրիտ և այլ գործիքներ ու ապարատներ, ինչպես նաև բոլոր տեսակի ժամացույցները և դրանց մասերը: Այս ապրանքախմբի արտահանման ծավալները նույնպես դրսևորել են բարձր աճի տեմպ, որը 2017 և 2018 թթ. կազմել է համապատասխանաբար 20.2% և 34.1%, իսկ 2019 թ. ավելի է արագացել՝ կազմելով շուրջ 82%: Բարձր աճի շնորհիվ կտրուկ աճել է նաև այս ապրանքախմբի կշիռը՝ 2019 թ. հասնելով 9.2%-ի:

«Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի կազմում ներառված են «միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական սարքեր, դրանց մասերը», «էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, դրանց մասերը, ձայնագրման ու ձայնավերարտադրության ապարատուրա, հեռուստատեսային պատկերի և ձայնի գրառման և վերարտադրության ապարատուրա, դրանց մասերն ու պարագաները»: Այս ապրանքախմբի աճի տեմպը նույնպես բավականին բարձր է եղել՝ 2017-2019 թթ. կազմելով միջինում տարեկան 34.9%:

«Արտահանման կառուցվածքում մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կշիռը բավականին փոքր է (2018–2019 թթ. կազմել է շուրջ 40.2%), իսկ կառուցվածքը՝ կենտրոնացված: Բացի այդ, արտահանման կառուցվածքում գերակշռում են ցածր արժեքով և քիչ տեխնոլոգիատար արտադրատեսակները, որոնց արտահանումից գեներացվում է ցածր ավելացված արժեք: Հետևաբար՝ արտահանման ծավալների աճի, կառուցվածքի բարելավման նպատակով անհրաժեշտ է մի կողմից՝ բացահայտել արդեն իսկ արտահանվող արտադրատեսակների արտահանման ծավալների աճի տեմպի արագացման հնարավորությունները, մյուս կողմից՝ մշակել «Արդյունաբերության մրցունակության բարձրացմանն ուղղված արդյունավետ գործիքակազմ, որը կնպաստի առավել տեխնոլոգիատար և բարձր ար-

Ժեքով արտադրատեսակների արտադրության և արտահանման ընդլայնմանը: Այդ տեսանկյունից՝ անհրաժեշտ է առավել մանրամասն ուսումնասիրել «սարքեր և ապարատներ» ապրանքախմբի աճի գործոնները (քանի որ վերջինս, ունենալով համեմատաբար փոքր կշիռ, վերջին տարիներին դրսևորել է բավականին բարձր աճի տեմպ) և բացահայտել այդ ապրանքախմբի մրցունակության բարձրացման հնարավորությունները:

Գծային ռեգրեսիայի հավասարման միջոցով արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները գնահատելու համար արտահանման կառուցվածքի վերլուծության հիման վրա առանձնացվել են ընդհանուր, մշակող արդյունաբերական արտադրանքի, պատրաստի սննդի արտադրանքի և մանածագործական արտադրանքի արտահանման ցուցանիշների ժամանակային շարքերը՝ եռամսյակային կտրվածքով, որոնք պատկերված են գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4. Մոդելներում կիրառված արտահանման ծավալների եռամսյակային ժամանակային շարքերը սեզոնայնությունից ազատված և լոգարիթմված տեսքով

Հետազոտության մեթոդաբանություն բաժնում նկարագրված մոդելների գնահատման ամփոփ արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների գնահատման մոդելների հիմնական արդյունքները

Մոդելը		Առաջարկի գործոնի ազդեցությունը	Փոխարժեքի ազդեցությունը	Արտաքին պահանջարկի ազդեցությունը	Մոդելի դեպրեմինացիայի գործակիցը (R ²)
Ընդհանուր արտահանում	Ազդեց. գործակիցը	0.98	-0.28	5.25	0.53
	Նշանակալիությունը (p-value)	0.0004	0.0003	0.0000	
Մշակող արդյունաբերական արտադրանքի արտահանում	Ազդեց. գործակիցը	0.65	-0.62	4.65	0.42
	Նշանակալիությունը (p-value)	0.0040	0.0029	0.0069	
Պատրաստի սննդի արտադրանքի արտահանում	Ազդեց. գործակիցը	1.08	-0.50	7.61	0.65
	Նշանակալիությունը (p-value)	0.0001	0.0086	0.0000	
Մանածագործական արտադրանքի արտահանում	Ազդեց. գործակիցը	0.99	-0.017	6.92	0.38
	Նշանակալիությունը (p-value)	0.098	0.5878	0.0395	

Գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրված մակրոտնտեսական բոլոր գործոններն ունեն նշանակալի ազդեցություն արտահանման դինամիկայի վրա: Ներքին տնտեսությունում արդյունաբերության աճի, ինչպես նաև արտաքին պահանջարկի աճի 1.0 տոկոսային կետով արագացումը դրականորեն է ազդում ընդհանուր արտահանման ծավալների վրա (համապատասխանաբար՝ 0.98 և 5.28 տոկոսային կետով): Իրական արդյունավետ փոխարժեքի 1.0 տոկոսային կետով արժևորման արագացումը արտահանման աճի վրա ունենում է 0.28 տոկոսային կետով բացասական ազդեցություն: Ընդ որում, ինչպես կարելի է նկատել (1) հավասարումից, փոխարժեքի ազդեցությունը տեղի է ունենում 1 եռամսյակ ուշացումով:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների վերոնշյալ ուղղությունները պահպանվում են, սակայն արտաքին պահանջարկի ազդեցությունն ավելի թույլ է, իսկ փոխարժեքինը՝ ավելի մեծ:

Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների աճի վրա արտաքին պահանջարկի 1.0 տոկոսային կետով արագացումը ունենում է 7.61 տոկոսային կետով դրական ազդեցություն, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի 1.0 տոկոսային կետով արժևորումը՝ 0.5 տոկոսային կետով բացասական ազդեցություն: Արդյունաբերության աճի 1.0 տոկոսային կետով արագացումը պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների


աճը արագացնում է 1.08 տոկոսային կետով: Ընդ որում, պատրաստի սննդի արտադրանքի արտահանումն ունի նշանակալի իներցիա, այսինքն՝ նախորդ երկու եռամսյակների արտահանման ծավալներն ազդեցություն են ունենում ներկա եռամսյակի արտահանման վրա:

Մանածագործական արտադրանքի արտահանման ծավալների աճի վրա ներքին արտադրության և փոխարժեքի գործոնների ազդեցությունները նշանակալի չեն, թեև պահպանում են վերոնշյալ ուղղությունները: Նշանակալի է միայն արտաքին պահանջարկի ազդեցությունը, որի 1.0 տոկոսային կետով աճը հանգեցնում է մանածագործական արտադրանքի արտահանման ծավալների աճի՝ 6.92 տոկոսային կետով:


SVAR մոդելների գնահատման արդյունքները և շոկերին արձագանքների ֆունկցիաները ներկայացված են գծապատկերներում (5, 6, 7, 8): Գնահատման արդյունքները և ռեգրեսիոն մոդելներով ստացված արդյունքները հիմնականում համադրելի են: Մասնավորապես՝ SVAR մոդելների միջոցով գնահատված մակրոտնտեսական գործոնների ազդեցությունների ուղղությունները արտահանման ծավալների վրա համադրելի են ռեգրեսիոն մոդելների միջոցով ստացված արդյունքների հետ: Սակայն SVAR մոդելների գնահատումը թույլ է տալիս պատկերացում կազմել ազդեցությունների տևողության և դինամիկայի վերաբերյալ, ինչը լրացուցիչ և կարևոր տեղեկատվություն է արտահանման դինամիկան ուսումնասիրելու տեսանկյունից:

Ընդհանուր արտահանման ծավալների վրա առաջարկի (արդյունաբերության աճի) և պահանջարկի (գործընկեր երկրների տնտեսական աճի) գործոնները, ինչպես և սպասելի էր, ունեն դրական ազդեցություն, իսկ փոխարժեքի արժևորումը՝ բացասական (գծապատկեր 5): Սակայն արտահանման ծավալների վրա առավել երկարատև ազդեցություն է ունենում արդյունաբերության աճը, որի մեկ ստանդարտ շեղման չափով շոկը՝ շուրջ 4.2% աճը, հանգեցնում է արտահանման ծավալների շուրջ 5.6% աճի: Ընդ որում, արդյունաբերության աճի շոկը մարում է բավականին արագ՝ շուրջ 3 եռամսյակում, իսկ դրական ազդեցությունն արտահանման ծավալների վրա պահպանվում է շուրջ 6–8 եռամսյակ: Գործընկեր երկրների տնտեսական աճի ազդեցության գործակիցը << արտահանման ծավալների վրա թեև բարձր է (արտաքին պահանջարկի շուրջ 1.0% աճը հանգեցնում է արտահանման շուրջ 6.4% աճի), սակայն մնայուն չէ. շոկը մարելուն պես արտահանման վրա դրական ազդեցությունը նույնպես մարում է: Ինչ վերաբերում է իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությանը, ապա ազդեցության գործակիցն ավելի փոքր է, քան վերոնշյալ երկու գործոնները (փոխարժեքի շուրջ 3.3% արժևորումը հանգեցնում է արտահանման 0.64% նվազման) և, միևնույն ժամանակ, ունի առավել կարճատև ազդեցություն:


Մշակող արդյունաբերության արտադրանքի վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցություններն ունեն նույն դինամիկան (գծապատկեր 6): Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման դեպքում արդյունաբերության աճի և փոխարժեքի ազդեցություններն ավելի փոքր են և կարճատև կետ (գծապատկեր 7): Մինչդեռ, արտաքին պահանջարկը, թեև նույնպես կարճատև, սակայն զգալի ազդեցություն է ունենում պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների վրա:




Գծապատկեր 5. Ընդհանուր արդաահանման ծավալների արձագանքը մակրոփորտեսական շղկերին



Գծապատկեր 6. Մշակող արդյունաբերության արդաադրանքի արդաահանման ծավալների արձագանքը մակրոփորտեսական շղկերին



Գծապատկեր 7. Պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների արձագանքը մակրոտնտեսական շղկերին



Գծապատկեր 8. Մանածագործական արդադրանքի արտահանման ծավալների արձագանքը մակրոտնտեսական շղկերին

Եզրակացություն: Իրականացված վերլուծությունների արդյունքում կարող ենք փաստել, որ արտահանման ծավալների դինամիկայի վրա մակրոտնտեսական գործոնները՝ «Ձ» արդյունաբերության իրական աճը, գործընկեր երկրներում տնտեսական աճի և իրական փոխարժեքի փոփոխությունը, ունեն նշանակալի ազդեցություն, ինչը համահունչ է մասնագիտական գրականությունում այլ երկրների համար կատարված աշխատանքների արդյունք-

ներին: Միևնույն ժամանակ, իրականացված հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մակրոտնտեսական գործոնների շարքում արտահանման ծավալների վրա առավել նշանակալի և երկարատև ազդեցություն է ունենում առաջարկի գործոնը՝ ՀՀ արդյունաբերական արտադրանքի աճը: Իսկ պահանջարկը և փոխարժեքը թեև նույնպես նշանակալի, սակայն ավելի կարճատև են: Հատկանշական է, որ գործընկեր երկրների տնտեսական աճի՝ ՀՀ արտահանման վրա ազդեցության գործակիցը բավական մեծ է, ինչը հիմնականում պայմանավորված է գործընկեր երկրների տնտեսությունների խոշոր ծավալներով:

Վերոնշյալ ազդեցությունները պահպանվում են նաև մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ուսումնասիրության պարագայում: Սակայն մշակող արդյունաբերության արտադրանքի դեպքում արտահանման վրա արտաքին պահանջարկի ազդեցության գործակիցն ավելի թույլ է՝ 4.65՝ ընդհանուր արտահանման 5.25-ի փոխարեն, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ հանքարդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալներն ավելի մեծ կախվածություն ունեն արտաքին պահանջարկից: Հարկ է նշել նաև, որ մշակող արդյունաբերության արտահանման ծավալների վրա նշանակալի ազդեցություն է ունենում ոչ թե իրական արդյունավետ փոխարժեքի կամ ԱՄՆ դոլարի նկատմամբ իրական փոխարժեքի, այլ ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ փոխարժեքի իրական փոփոխությունը: Դա պայմանավորված է ՀՀ արտահանման աշխարհագրական կենտրոնացվածությամբ:

Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման կառուցվածքում ամենամեծ կշիռ ունեցող ապրանքախմբի՝ պատրաստի սննդի արտադրանքի արտահանման ծավալների վրա ՀՀ արդյունաբերության աճի և արտաքին պահանջարկի աճի ազդեցության գործակիցներն ավելի մեծ են, քան ընդհանուր մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման դեպքում, իսկ փոխարժեքի ազդեցությունը՝ ավելի փոքր:

Մանածագործական արտադրանքի ապրանքախմբում ներառված ապրանքատեսակների արտահանման ծավալների վրա ՀՀ արդյունաբերության աճի և փոխարժեքի ազդեցությունների ուղղությունները պահպանվում են, սակայն ազդեցության գործակիցները նշանակալի չեն: Հետևաբար՝ այս ապրանքախմբի արտահանման ծավալները մեծ մասամբ կախված են արտաքին պահանջակի տատանումներից:

Օգտագործված գրականություն

1. Մխիթարյան Լ. Կ., Իրական փոխարժեքը և ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքի փոփոխությունները, Եր., «Տնտեսագետ» հրատ., «Բանբեր ՀՊՏՀ», 3(39), 2015:
2. Վարդանյան Ք. Զ., Ավագյան Գ. Ա., ՀՀ վճարային հաշվեկշռի վերլուծությունը և դրա վրա իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցության գնահատումը, Եր., «Տնտեսագետ» հրատ., «Բանբեր ՀՊՏՀ», 4 (28), 2012:
3. Anand R., Perrelli R., Zhang B., South Africa’s exports performance: Any role for structural factors?, IMF Working Paper, WP/16/24, 2016.

4. Fugazza M., Export performance and its determinants: Supply and demand constraints, Policy Issues in International Trade and Commodities, Study Series No. 26, 2004, UNCTAD/ITCD/TAB/27
5. Matiy A., Matundura E., Analysis of macroeconomic factors affecting the performance of manufactured exports in Kenya, The International Journal of Business & Management, Vol. 7, Issue 9.
6. Redding S., Venables A., Geography and export performance: External market access and internal supply capacity, NBER Working Paper 9637, 2003.
7. Sumiyati E.E., Factors affecting manufacturing exports, Journal of Economics, Business, and Accountancy Ventura, Vol. 23, No. 2, August – November, 2020.
8. Supper E., Is there effectively a level playing field for developing country exports?, Policy Issues in International Trade and Commodities, Study Series No. 1, 2001, UNCTAD/ITCD/TAB/2

ГАЯАНЕ АВАГЯН

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

КНАРИК ВАРДАНЯН

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

ГАГИК ПЕТРОСЯН

*Ассистент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

Оценка влияния макроэкономических факторов на экспорт промышленной продукции РА. – Структура и динамика экспорта в современном мире имеют большое значение для повышения конкурентоспособности, экономического роста и развития экономики. Таким образом, анализ факторов, влияющих на объемы, динамику и структуру экспорта, имеет как теоретическое, так и практическое значение, поскольку может быть основой для повышения эффективности экономической политики, направленной на увеличение экспорта, что, в свою очередь, повысит конкурентоспособность экономики. В этом контексте в данной статье анализируется структура динамики экспорта, а также оценивается влияние макроэкономических факторов, в частности спроса, предложения и изменения обменных курсов, как в целом на объемы экспорта, так и на объемы отдельных групп товаров. Исследование проводилось с использованием моделей двух типов: линейной многомерной регрессии и структурной авторегрессии. Такой подход позволил оценить как величину и значимость воздействия макроэкономических факторов на объемы экспорта, так и продолжительность и траекторию их

воздействия. Результаты исследования показали, что макроэкономические факторы - реальный рост промышленности Армении, изменение реального обменного курса и экономический рост в странах-партнерах, оказывают существенное влияние на динамику объемов экспорта, но их размер, траектория и интенсивность различаются в зависимости от продукта и экспортных рынков.

Ключевые слова: экспорт, факторы экспорта, конкурентоспособность, обменный курс, внешний спрос.

JEL: F47, O11

DOI: 10.52174/1829-0280_2021_4_9

GAYANE AVAGYAN

*Associate Professor of the Chair
of Macroeconomics of ASUE, PhD in Economics*

KNARIK VARDANYAN

*Associate Professor of the Chair
of Macroeconomics of ASUE, PhD in Economics*

GARIK PETROSYAN

*Assistant Professor of the Chair
of Macroeconomics of ASUE, PhD in Economics*

Assessment of the Impacts of Macroeconomic Factors on the Export of Industrial Products. – The structure and dynamics of exports in the modern world are of great importance for the economic growth, competitiveness and development of countries. Therefore, the analysis of the factors influencing the volumes, dynamics and structure of exports is of both theoretical and practical importance, as it can be a basis for increasing the effectiveness of economic policies aimed at increasing exports, which in turn will increase the competitiveness of the economy. In this context, this paper analyzes the structure of export dynamics, as well as assesses the effects of macroeconomic factors, in particular, supply, demand and exchange rate, on the volume of exports of both general and individual major products. The study was conducted using two methods: linear multidimensional regression models and structural autoregression models. Such an approach has made it possible to assess both the extent and significance of the impact of macroeconomic factors on export volumes, as well as the length and trajectory of their impact. The results of the study showed that macroeconomic factors - the real growth of Armenia's industry, economic growth in partner countries, the change in the real exchange rate - have a significant impact on the dynamics of export volumes. However, their size, trajectory,

and duration differ, depending on the product and export markets.

Keywords: *exports, export factors, competitiveness, exchange rate, external demand.*

JEL: F47, O11

DOI: 10.52174/1829-0280_2021_4_9